ԱՆՏԻԿ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՐԱԿԵՐՏ ԹԱՂ ԳԱՌՆԻՈՒՄ

Ա. Ա. ՍԱՀԻՆՅԱՆ

Գառնիի հեթանոսական տաճարի ճարտարապետությանը անդրադարձել են շատ մասնագետներ, սակայն տաճարի տարածական-ծավալային ներքին հորինվածքի, ինչպես նաև աղոթասրահի և ամբողջ շենքի ընդհանուր ծածկի հարցերը նրանց մեծագույն մասի գործերում քննության առարկա չեն դարձել։ Այդ բացատրվում է ոչ թե տվյալ հարցի նկատմամբ հետաքրքրության բացակայությամբ, այլ դրանց լուսաբանման համար անհրաժեշտ նյութերի պակասով։ Այսուհանդերձ, մի քանի հեղինակներ, որոնք հնարավորություն են ունեցել համեմատաբար ավելի հանգամանորեն զբաղվելու տաճարի ճարտարապետական-կառուցողական արվեստի ուսումնասիրությամբ, համառոտակի հայտնել են որոշ տեսակետներ։

Ակադեմիկոս Ն. Մառի արշավախմբի ճարտարապետ Կ. Ռոմանովը, անդրադառնալով աղոթասրահի (ցելլայի) առաստաղի կառուցվածքին, գրում է. «От покрытия древнего здания внутри никаких следов не сохранилось... Но по сохранившимся камням архитравного перекрытия стен видно, что стены внутри здания увенчивались тонким каблучком и полочкой. Этот каблучок лежал ниже перекрытия портиков потолочными плитами.

По горизонтальной стеске над каблучком в виде четверти можно допустить, что здесь лежал брус (мауэрлат), на котором опиралось деревянное перекрытие...»[1].

Նույն հարցի վերաբերյալ պրոֆ. Ն. Բունիաթյանը նշում է. «Տաճարի ծածկն անպայման եղել է ուժեղ փայտե գերաններ վրա *և կղմինդրներով։* Մի այլ կերպ չի կարելի ենթադրել, *քանի որ տաճարի բացվածքը հավասար է համարյա 5,5 մետրի և առանց միջնասյուների* նման լայն բացվածքը չէր կարող ծածկվել սալաքարերով. *մանավանդ, որ այդպիսիներ բնավ չկան մյուս մնացորդների թվում»*[2]։ *Մեկ այլ առիթով նույն հեղինակը, խոսելով շենքի ընդհանուր տանիքի մասին, գրում է.* «Տանիքն, անկասկած, եղել է փայտից, ինչպես այդ գործադրվում էր այն ժամանակ, իսկ ծածկը՝ կղմինդրից»[3]։

Տաճարի ներքին կառուցվածքին անդրադարձել է նաև պրոֆ. Կ. Տրևերը։ Հին Հայաստանի մշակույթի պատմությանը նվիրված իր մեծարժեք աշխատության մեջ անվանի գիտնականը գրում է. «От перекрытия внутри зда-

---

[1] К. К. Романов, Развалины храма римского типа в Баш-Гарни, «Из истории докапиталистических формаций», сборник статей к 45-летию научной деятельности Н. Я. Марра, М.—Л., 1933, *էջ 647 (այստեղ և հետագայում ընդգծումները իմն են)։*

[2] *Ն. Բունիաթյան, Հեթանոսական տաճար Տրդատի պալատին կից Գառնի ամրոցում, Երևան, 1933, էջ 13։*

[3] *Նույն տեղում, էջ 7։*

ния ничего не сохранилось; если оно вообще было, *то должно было быть деревянным,* так как вес потолочных плит портика доходил до 5 тонн, а пролет храма равен 5,5 м., из чего следует, что каменное перекрытие требовало бы промежуточных колонн, которых здесь не было»[4].

Ինչպես տեսնում ենք, բոլոր հեղինակներն էլ Գառնիի աղոթասրահի ծածկի համար ենթադրում են փայտակերտ հարթ (արխիտրավային) ծածկ։

Դժվար չէ նկատել, որ այդ տեսակետի հիմնավորման հիմնական ելակետը համարվում է այն, որ եթե աղոթասրահի ծածկը լիներ քարակերտ, ապա նման մեծ թռիչքը քարե սալերով ծածկելու համար պետք է աղոթասրահի երկայնական պատերի միջև գոյություն ունենային լրացուցիչ սյուներ (հենարաններ)։

Նշանակում է, քարի կոնստրուկցիաների դեպքում անգամ աղոթասրահի ծածկը պատկերվում է ոչ այլ կերպ, քան ծածկի նույն հարթ հորինվածքի ձևով։

Հուշարձանի ավերակների շրջապատում թափված բեկորների առավել հանգամանորեն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տաճարի միջուկը հանդիսացող աղոթասրահը ծածկված է եղել այլ ձևով և ունեցել է տարածական-ծավալային միանգամայն այլ հորինվածք։

1. Տաճարի ինչպես ընդհանուր տանիքը, այնպես էլ աղոթասրահի ծածկը փայտակերտ պատկերող բոլոր նախագծերում, աղոթասրահի պատերի հաստությունները մշտապես ներկայացվել են միմյանց հավասար։ Այնինչ, իրականում նրանք ունեցել են տարբեր հաստություններ։ Տաճարի ավերակների մեջ գտնվեց աղոթասրահի պատերի հյուսիս-արևմտյան հանգույցի մեկ ամբողջական անկյունաքար, որը ցույց է տալիս շենքի երեք ուղղությամբ ընթացող պատերի հաստությունների ստույգ չափերը (տե՛ս նկ. 1)։ Ընդ որում, ուշագրավն այն է, որ աղոթասրահի հյուսիսային պատը, որի վրա գալիս է նախամուտքի (пронаос)՝ *շուրջ չորս մետր երկարություն և ավելի քան հինգ տոննա կշիռ ունեցող առաստաղի սալերի հսկայական բեռը, ունի ավելի փոքր հաստություն (0,76—0,78 մ), քան արտաքին սյունասրահների առաստաղի՝ երկու անգամ ավելի թեթև սալաքարերի բեռը կրող արևմտյան և արևելյան պատերը (0,92—0,94 մ)։ Ստացվում է, որ* մեծ բեռ կրող պատն ունի փոքր հաստություն, իսկ փոքր բեռ կրող պատը՝ շատ մեծ հաստություն։ *Ճիշտ է, փայտե կոնստրուկցիաների դեպքում այդ մեծ հաստություն ունեցող պատերի վրա պետք է ավելանար նաև փայտե հեծանների կշիռը, սակայն անիմաստ կլիներ մտածել, որ անհամեմատ չնչին կշիռ ունեցող փայտե մի քանի հեծանի համար կարող էր պատերի կառուցվածքում նման տարբերություններ ստեղծելու կարիք առաջանալ։ Բնական է, որ արևելյան ու արևմտյան պատերի մեծ հաստություններն արվել են ծածկից առաջացող շատ ավելի մեծ բեռի համար, և այդ մեծ բեռը, հասկանալի է, կարող էր ունենալ միայն քարակերտ ծածկը[5]։*

---

4 К. В. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, էջ 49։

5 *Աղոթասրահի հարավային պատն ունի այնպիսի հաստություն, որպիսին ունեն նրա արևելյան և արևմտյան պատերը։ Եթե հարավային պատի հաստության չափը որոշվեր նրա վրա ընկնող բեռի կշռի հաշվումների միջոցով, ապա նա պետք է լիներ հյուսիսայինի 0,76—0,78 մ հաստությունից ավելի բարակ, որովհետև հարավային պատի վրա դրվող առաս-*



Գառնիի տաճարի գլխավոր ճակատը

2. Աղոթասրահի երկայնական (արևելյան ու արևմտյան) պատերի վերջին շարքի քարերը արտաքին կողմից իրենց բարձրությամբ, հարթության մշակումով (պրոֆիլներով), քարերի տաշվածքի ֆակտուրայով և հողմնահարվածության աստիճանով հար և նման են նույն պատերի դիմացից ընթա-



Նկ. 1

ցող սյունաշարքերի արխիտրավներին, իսկ ներսի երեսի վերևի մասը 0,23—0,27 մ բարձրությամբ և 0,44—0,51 մ խորությամբ կտրված և հանված է։

տաղի սալերը հյուսիսային պատի վրա տեղադրվող սալերի համեմատությամբ շատ փոքր չափեր (1,70—2,14 մ) ունեն։ Այս դեպքում աղոթասրահի չորս պատերը կուներ երեք տեսակի հաստություն, որն, անշուշտ, անցանկալի կլիներ։ Մնում էր հարավային պատի հաստության չափը վերցնել կամ հյուսիսայինին հավասար, կամ հարավայինին կից արևելյան և արևմտյան պատերի հաստություններին հավասար. վերջինը, իհարկե, ավելի տրամաբանական էր ու հարմար և հենց այդպես էլ արվել է։

Այդ կտրված և հեռացված հատվածի տեղում առաջացած խորշի ներքևի մակերեսը հետազոտողները մշտապես պատկերել են հորիզոնական հարթություն և ենթադրել, որ դրա վրա դրվել է «մաուերլատ» կոչված փայտե գերանը[6] (տե՛ս նկ. 2)։

Պարզ է, որ մաուերլատը պետք է դրվեր հորիզոնական մակերես ունեցող քարե պատի երկայնքով, որպեսզի նրա վրա հնարավոր լիներ շարել շենքի՝ լայնական ուղղությամբ տեղադրվելիք փայտե հիմնական հեծանները։ Սակայն ուշադիր չափագրությունը ցույց է տալիս, որ քարերն ունեն ակնհայտ շեղ կտրվածք։ Եթե դրանց վրա դնելու լինեին մաուերլատները (որ անտարակույս պետք է ունենային ուղղանկյունի կտրվածք), ապա նրանց վերևի մակերեսը հորիզոնական վիճակում պահելու համար անհրաժեշտ կլիներ ներքևի մակերեսները քարերի շեղ կտրվածքի վրա տեղադրելու նպատակով նույնպես անել շեղ։ Սակայն դա կլիներ միանգամայն անիմաստ։ Եթե քարերի վրա պետք է դրվեին փայտե գերաններ, ապա ինչո՞ւ պետք է ուղղանկյունի կտրվածք ունեցող փայտե գերանի տակի քարը տաշվեր շեղ և այդ շեղությանը հարմարվելու նպատակով էլ փայտե գերանի՝ քարի վրա նստող մասը նույնպես շեղ տաշվեր։ Սա կառուցողական տեսակետից ոչ միայն անհարմար, այլև, կրկնում ենք, միանգամայն անիմաստ բան է[7]։

Կասկածից վեր է, որ աղոթասրահի երկայնական պատերի վրա տեղադրված այդ քարերի շեղ կտրված մակերեսները արվել են նրանց վրա համապատասխան թեքություն ունեցող ուրիշ քարեր տեղադրելու նպատակով (տե՛ս նկ. 3)։ Նշանակում է, որ աղոթասրահի երկայնական պատերի ամբողջ երկարությամբ դասավորված շեղ մակերեսով այդ քարերը ոչ այլ ինչ են, եթե ոչ աղոթասրահի թաղակապ ծածկի առաջին շարքի՝ այսպես կոչված «կրունկի» քարերը։ Կրունկի քարերի վրա, հաջորդ շարքի կառուցման համար գոյություն ունեցող տեղի ձևից ու խոշոր չափերից ակնհայտ է դառնում նաև հաջորդ շարքի քարակերտ հորինվածքը։ Բարեբախտաբար պահպանվել են աղոթասրահի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան պատերի երկարությամբ այդ պատերից սկզբնավորվող թաղի կրունկի բոլոր քարերը։ Այս փաստերից աներկբայորեն հետևում է, որ աղոթասրահի առաստաղը՝ հյուսիսից-հարավ ընկած ամբողջ տարածությամբ, ծածկված է եղել մեկ միասնական թաղով, և այն, ինչպես ցույց է տալիս այդ թաղի ներքևից հաշված երկու շարքի (կրունկի և նրա քարերի վրա զետեղված հաջորդ շարքի) կառուցվածքը, եղել է քարակերտ։

3. Կրունկի առանձին քարերի վրա դեռևս պահպանված են կրաշաղախի մնացորդներ։ Ինքնին հասկանալի է, որ կրաշաղախ կարող էր օգտագործվել աղոթասրահի առաստաղի ոչ թե փայտակերտ, այլ միայն քարաշեն ծածկի դեպքում։

---

6 К. К. Романов, նշվ. աշխ., էջ 647, նկ. 3։

7 Ընդ որում, պատի վրա իրար կողքի շարված, շեղ կտրվածք ունեցող այդ քարերի մակերեսները հորիզոնական ուղղությամբ իրար շարունակություն չեն կազմում (մեկը մյուսից բարձր կամ ցածր է)։ Հետևապես, նրանց վրա դժվար կլիներ ընդհանուր մաուերլատ դնել։ Եթե պատկերվի, որ մաուերլատը դրվել է անջատ-անջատ կտորներով՝ միայն հեծանների տակ, այն ժամանակ հարց է առաջանում, ինչո՞ւ համար են այդ քարերը պատի ամբողջ երկարությամբ տաշվել։ Չէ՞ որ կարելի էր տաշել քարի միայն այն հատվածը, որի վրա պետք է զետեղվեին մաուերլատը և նրա վրա նստող համապատասխան հեծանի ծայրը։

4. Տաճարի ավերակների մեջ գտնվեցին աղոթասրահի թաղակապ քարաշեն ծածկի գրեթե անաղարտ պահպանված մի շարք բեկորներ, որոնք թե՛ քարի տեսակով (որձաքար), թե՛ հողմահարվածության աստիճանով, թե՛ քարի մշակման ֆակտուրայով, թե՛ մետաղական կապերի համար ունեցած հնագույն խոռոչներով, թե՛ տաճարի բոլոր բեկորների ծանրության ուղիղ կենտրոնում գոյություն ունեցող՝ քարերի բարձրացման համար փորված (վերևում նեղ, ներքևում լայն չափի) խոռոչի առկայությամբ, պատկանում են տաճարի սկզբնական կառուցվածքին (տե՛ս նկ. 4)։ Այդ քարերից մեկի վերին մակերեսն ունի մաքուր տաշված կորաձև տեսք, որի կորի շառավիղը ճշտությամբ համապատասխանում է աղոթասրահի լայնության կեսին (2,52 մ), այսինքն, լիովին համընկնում է այն կորին, որպիսին կարող է ունենալ աղոթասրահի գլանաձև (կիսաշրջանաձև) հորինվածք ունեցող թաղակապ ծածկի լայնական կտրվածքը։ Քարը գրված է եղել հարավային ճակատը եզրափակող պատի վերին շարքի արևմտյան մասում և շնորհիվ իր մեծ չափերի (բարձրությունը հավասար է 0,63 մ, խորությունը՝ 0,64 մ, երկարությունը՝ 1,75 մ) գրավել է շարքի ամբողջ արևմտյան կեսը։ Նրա վրա պահպանված մետաղական կապի ագուցման փորվածքը ցույց է տալիս, որ այդ քարը մետաղական հորիզոնական գամով միացված է եղել նույն շարքի արևելյան կեսի նույնանման քարին։

Հայտնաբերված քարերից մյուսը գետեղված է եղել նույն պատի՝ վերևից հաշված երկրորդ շարքի արևելյան անկյունում, նրա կորության շառավիղը հավասար է այս պատի առաջին շարքի վերը հիշատակված քարի կորության շառավիղին, այսինքն, երկուսի կորագիծ եզրագծերը կազմում են միմյանց շարունակությունը (տե՛ս նկ. 5)։ Քարի վրա կա հորիզոնական գամի ագուցման համար փորվածք։

Պահպանված է նաև թաղի հարավային ճակատը եզրափակող տվյալ պատի բոլոր շարքերի ուղղանկյուն որմնաշարքերի նշանակալից մասը։

Երրորդ քարը պատկանում է թաղակապ ծածկի հյուսիսային ճակատը եզրափակող պատի վերևից հաշված առաջին շարքին և տեղադրված է եղել այդ շարքի արևմտյան կեսում։ Իր ընդհանուր մշակումով, տեսքով, մետաղական կապերի համար արված փորվածքով, վեր բարձրացնելու համար քարի ծանրության կենտրոնում բացած հատուկ խոռոչով, եզրերի կորության շառավիղով այս քարը հար և նման է թաղի հարավային ճակատը եզրափակող պատի վերևի շարքի համապատասխան որմնաքարերին։

Նկարագրված քարերը հնարավորություն են ընձեռում ոչ միայն վերականգնել աղոթասրահի թաղակապ ծածկի հարավային և հյուսիսային ճակատների իրական պատկերը, այլև նշտարեն որոշել թաղի տեսակը՝ ձևը (կիսաշրջանաձև) և նրա սկզբնական կառուցվածքի ստույգ չափերը։

Կարելի էր մտածել, որ Գառնիի տաճարի աղոթասրահի հարավային և հյուսիսային ծայրերի կիսաշրջանաձև վերջավորությամբ այդ պատերը ինչ-որ ձևով կատարել են քրիստոնեական վաղ շրջանի հին հռոմեական կամ սիրիական բազիլիկային կառուցվածքների փայտակերտ տանիքների հորինվածքներում հանդիպող կամարների դերը (Հռոմում՝ Ս. Ագնեսի IV դարի տաճարը[8],

[8] Н. И. Брунов, Очерки по истории архитектуры, т. II, М.—Л., 1935, էջ 413։



Ч4. 2, 3, 4

Սիրիայում՝ Ռուվեայի բազիլիկան[9], Կալբ-Լուզեն[10]՝ V—VII դդ. և այլն)։ Սակայն այդ բոլորովին բացառված է, եթե նույնիսկ ի նկատի չունենանք Գառնիի տաճարի թաղակապ ծածկի վերը հիշատակված մնացորդների գոյությունը։ Բանն այն է, որ փայտաշեն ծածկ ունեցող նման կառուցվածքներում, օրինակ՝ Ռուվեայի բազիլիկայում, շենքի երկայնական պատերին ուղղահայաց կառուցվել են քարաշեն կամարներ և վերջինների վրա բարձրացվել փայտակերտ տանիքի լանջերին զուգահեռ երկթեք պատեր, որպեսզի այդ երկթեք պատերը, տանիքի ծպեղների (стропила) հետ մեկտեղ կարողանան կրել կղմինդրև տանիքի կավարամածը (обрешотка)։ Նույն սկզբունքը կիրառված է նաև Հռոմի Ս. Աղնեսի տաճարի տանիքի կառուցվածքում. տաճարի աբսիդի կոնխայի բացվածքը երիզող կամարի վրա բարձրացվել է երկթեք վերջավորությամբ ուղղաձիգ պատ, որը փայտաշեն տանիքի ծպեղների հետ կրում է ընդհանուր տանիքի կավարամածը։ Եթե Գառնիի տաճարի աղոթասրահի ծածկը լիներ փայտաշեն, ապա աղոթասրահի կոր վերջավորությամբ այդ պատերի վրա պետք է բարձրացված լինեին նաև երկթեք վերջավորությամբ պատեր։ Այս դեպքում միանգամայն անիմաստ կդառնար երկթեք վերջավորություն ունեցող պատերի տակ կոր վերջավորությամբ պատերի գոյությունը։ Տաճարի կառուցողները ինչո՞ւ պետք է հատուկ շաբլոնով, խնամքով ու որոշակի դժվարությամբ մշակեին կորաձև որմնաքարեր, զգուշությամբ տեղադրեին դրանք շարքերի մեջ, մեծ ճշտությամբ ստանային պատի վերջավորության կիսաշրջանաձև եզրագիծը և անմիջապես այդ ամենը թաքցնեին երկթեք վերջավորություն ունեցող պատի շարքերի տակ։ Պարզ է, որ Գառնիի տաճարի կոր վերջավորությամբ պատերի վրա ուրիշ պատեր չեն բարձրացվել և որ կոր վերջավորություն ունեցող այդ պատերը եղել են ոչ այլ ինչ, եթե ոչ աղոթասրահի թաղակապ ծածկի հյուսիսային ու հարավային ճակատները եզրափակող պատերը։

5. Ն. Մառի պեղումների ժամանակ տաճարի նոր հայտնաբերված բեկորների թվում հիշատակվում է թաղի երկու քար։ 1909 թ. հունիսի 10-ի օրագրում նշված է. «Откопаны: 1) Камень из кладки с тесаною полосою на одной стороне и то поврежденною: камень имеет вид закругления, *точно полукруглого свода*»[11].

Այնուհետև հաջորդականությամբ թվարկվում են տաճարի այլ բեկորներ։ Հաջորդ օրվա հայտնաբերված բեկորներից երկրորդի վերաբերյալ գրված է. «...2) кусок камня с признаком закругления арки полукругом, но одна сторона здесь тесана, и вообще форма и назначение сего куска малопонятны.

Извлеченный вчера камень совсем без всякого признака определенной формы отнесен также к сей группе»[12].

Ակադեմիկոս Ն. Մառի հիշատակած կիսաշրջանաձև թաղի այդ քարերը, ցավոք, տեղում չեն պահպանվել։

---

9 Նույն տեղում, էջ 466։ Ուշադրավ է, որ հայկական ճարտարապետության մեծ դիտակ Ն. Տոկարսկին փորձում է Ռուվեայի օրինակով վերականգնել Երերուքի բազիլիկայի ծածկը (տե՛ս Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 80, նկ. 23։

10 Н. П. Брунов, նշվ. աշխ., էջ 467։

11 Архив АН СССР в Ленинграде, архив Н. Я. Марра, ф. 800, А 2930, թ. 9։

12 Նույն տեղում, թ. 10։

6. Տաճարի արևելյան և արևմտյան ճակատների ամբողջ երկարությամբ պահպանվել են անտաբլեմենտի քիվի համարյա բոլոր քարերը (30-ից պահպանվել է 28 հատ), որոնց վրա անխտիր գոյություն ունեն կրաշաղախի մեծ չափի մնացորդներ (տե՛ս նկ. 6)։ Կրաշաղախի մնացորդներ կան նաև ճակտոնների քիվի ինչպես անկյունների, այնպես էլ գագաթների (конек) քարերի վրա[13]։ Կրաշաղախից առաջացող բեռը թեթևացնելու նպատակով շաղախի մեջ լցված են ոչ թե պատերի համար օգտագործված որձաքարի բեկորներ կամ հիմքի շաղախի մեջ օգտագործված գետաքար, այլ շատ թեթև հրաբխային ծակոտկեն կարմրավուն քարեր։ Նույն կազմության կրաշաղախի խոշոր դանգվածներ մեծ քանակությամբ թափված են նաև տաճարի ավերակների շրջապատում։

Եթե տաճարի հյուսիսային ճակտոնի գագաթից մինչև հարավային ճակտոնի գագաթն ընկած տարածության վրա, տանարի երկլանջ տանիքի ամբողջ կառուցվածքում օգտագործվել է կրաշաղախ, ապա ինքնին հասկանալի է, որ այն կարող էր պետք դալ ոչ թե փայտաշեն, այլ քարակերտ տանիքի առկայության դեպքում։

7. Տաճարի հյուսիսային ճակտոնի հետևի (դեպի հարավ ուղղված) ճակատի վրա պահպանված են կիսաշրջանաձև թաղի կորության համապատասխանող, մեծ խորության ու բարձրության փորվածքներ, ուր ագուցվել են քարաշեն թաղի սալերը (տե՛ս նկ. 7, 8)։

Նույն կորությամբ մշակված թաղի մեկ որմնաքար պահպանվել է աղոթասրահի հյուսիսային պատի արտաքին՝ դեպի նախամուտքը ուղղված ճակատից։ Այս քարի կորաձև մշակված մասը որոշակիորեն տարբերվում է աղոթասրահի հարավային պատի վրա թաղակապ ծածկից պահպանված քարերի տեսքից։ Այստեղ քարի հաստության մի կեսը (դեպի աղոթասրահը ուղղված ճակատը) ունի սովորական որմնաքարի նման ուղղանկյունի կտրվածք, իսկ մյուս կեսը (դեպի նախամուտքը ուղղված ճակատը)՝ կորաձև մշակում։ Պարզ երևում է, որ վերջինիս վրա գետեղված է եղել թաղակապ ծածկի սալ (տե՛ս նկ. 9)։ Քարի բոլոր ճակատներն էլ ունեն կիսամաքուր տաշվածք։ Անկասկած է, որ նա դրված է եղել նախամուտքի և աղոթասրահի ընդհանուր պատի այն հանգույցում, որը ոչ մի տեղից չի երևացել։ Ինչպես ցույց են տալիս քարի վրա պահպանված մետաղական կապերի խոռոչները, այդ տեղը կարող էր լինել միայն նախամուտքի առաստաղի հարթ ծածկի վրա գտնվող տվյալ պատի հյուսիս-արևմտյան հատվածը, այսինքն՝ ճիշտ և ճիշտ հյուսիսային ճակտոնի հետևի ճակատի վրա ստեղծված թաղակապ ծածկի հյուսիս-արևմտյան հատվածի համապատասխան փորվածքների դիմացը։ Ուրեմն հյուսիսային ճակտոնի պատի հետևի երեսի վրա եղած փորվածքներին համապատասխանող թաղը մի ճակատով ագուցված է եղել ճակտոնի հետևի պատի մեջ, իսկ մյուսով տեղադրվել է աղոթասրահի հյուսիսային պատի՝ կոր մշակում ունեցող համապատասխան հատվածի վրա։ Այս

13 Ճակտոնների գագաթների քարերի վրա պահպանված կրաշաղախի մնացորդ նկատել է նաև ակադեմիկոս Ն. Մարը, իր պեղումների ժամանակ։ Խոսելով առյուծի գլխով քիվի քարերի վրա պահպանված կրաշաղախի մնացորդների մասին, նա գրում է. «Больше того — даже на верхе фронтона, открытого у сев.-вост. угла, остался явственный след бута» (տե՛ս նույն տեղում, ֆ. 800, А 2931, թ. 65)։



Ил. 5, 6, 7

նշանակում է, որ նախամուտքի առաստաղի հարթ ծածկի վրա կառուցվել է երկրորդ ծածկ, այս անգամ՝ թաղակապ[14]։

Արդ՝ հետաքրքիր է, թե ինչո՞ւ է ստեղծվել երկրորդ ծածկը։



Նկ. 8

Տաճարի հարավային ճակտոնի վրա թաղակապ ծածկի համար արված փորվածքներ չկան. նշանակում է՝ հարավային ճակատում դրա կարիքը չի եղել։

---

[14] Նախամուտքի արևելյան և արևմտյան պատերի միջև եղած հեռավորությունը ավելի մեծ է, քան աղոթասրահի համապատասխան պատերի միջև եղած հեռավորությունը. այդ իսկ պատճառով, նախամուտքի հարթ առաստաղի վրա ստեղծված թաղը ունի ավելի մեծ շառավիղ, քան աղոթասրահի առաստաղի ծածկի թաղը։

Հայտնի է, որ տաճարի արևելյան, արևմտյան և հարավային ճակատների սյունաշարքերի առաստաղների հորիզոնական ծածկի (0,97—1,5×2,05—2, 14×0,42 մ չափերի) սալերի համեմատությամբ, հյուսիսային ճակատում՝ նախամուտքի հորիզոնական ծածկի սալերն ունեն գրեթե կրկնակի չափեր (0,93—1,11×3,43—3,84×0,45—0,51 մ), հետևապես անհամեմատ շատ մեծ սեփական կշիռ։

Պարզ երևում է, որ նախամուտքի հորիզոնական ծածկի՝ առանց այն էլ սեփական մեծ կշիռ ունեցող սալերի վրա, ինչ-որ լրացուցիչ բեռից եկող ծանրություններ չեզոքացնելու նպատակով նախամուտքի հորիզոնական ծածկի վրա ստեղծվել է նաև թաղակապ ծածկ։

Ինչպես վերը նշվեց, տաճարի ավերակների շրջապատում թափված են երկլանջ տանիքում ժամանակին օգտագործված կրաշաղախի բազմաթիվ բեկորներ։ Դրանց մեջ կան այնպիսի խոշոր զանգվածներ, որոնք իրենց չափերով կարող են տեղադրվել միայն տաճարի հարավային և հյուսիսային սյունաշարքերի առաստաղների հարթ ծածկերի վրա։ Հարավային ճակատի սյունաշարքի առաստաղն ունի փոքր թռիչք, և այդ պատճառով այստեղ հանդուրժվել է շաղախի խոշոր լիցք, որից առաջացող ծանրությունը ոչ մի վնաս չէր կարող պատճառել հարթ ծածկին։ Վտանգավորը հյուսիսային ճակատն էր. նախամուտքի՝ մեծ թռիչք ունեցող հարթ առաստաղը կարող էր շաղախի ծանրության տակ չդիմանալ։ Ի նկատի ունենալով այդ, կառուցողները, նախամուտքի առաստաղը շաղախից զերծ պահելու նպատակով, առաստաղի հարթ ծածկի վրա ստեղծել են նաև թաղակապ ծածկ։

Եթե տաճարի ընդհանուր տանիքը փայտաշեն լիներ, ճակատների երկլանջ թեքությունների ուղղությամբ կդասավորվեին նույն թեքությունն ունեցող և անտիկ ճարտարապետության մեջ կիրառվող փայտե ֆերմաներ ու ապա նրանց վրա կստեղծվեր համապատասխան ծածկ. հետևապես չէր լինի ո՛չ հարավային ճակատի սյունաշարքի առաստաղի հարթ ծածկի վրա շաղախ լցնելու անհրաժեշտություն, ո՛չ նախամուտքի առաստաղի հարթ ծածկի վրա նաև թաղակապ ծածկ կառուցելու անհրաժեշտություն։

8. Հայտնի է, որ ուղղանկյուն բացվածքների արխիտրավային ծածկերի մեջ սեպաձև միացումների կիրառումը որոշակիորեն առնչվում է թաղակապ կառուցվածքների հետ։ Գառնիում, բացի անտաբլեմենտի արխիտրավի միակտոր քարից, շենքի բոլոր մասերը՝ ֆրիզը, քիվը, մուտքի պարակալի վրա դրված սանդրիկը, սանդրիկի վրայից ընթացող պատի որմնաքարերը, անգամ արտաքին սյունասրահների առաստաղների սալերն ունեն թաղային կոնստրուկցիաներին բնորոշ սեպաձև միացումներ (տե՛ս նկ. 10)։

ա. Զափազանց հետաքրքիր, յուրահատուկ սեպաձև միացումներ ունեն սյունաշարքի անտաբլեմենտի ֆրիզի քարերը։

Տաճարի գլխավոր (հյուսիսային) ճակատի սյունաշարքի արխիտրավների վրա շարված են եղել ֆրիզի տասնմեկ քար։ Դրանցից վեցը, որոնք մյուսների համեմատությամբ ավելի մեծ (1,17—1,38 մ) չափերի են, տեղադրվել են յուրաքանչյուր սյան ուղղությամբ արխիտրավների միացման հանգույցներում և ծառայել են իբրև արխիտրավային հարթ ծածկի սեպաձև միացումների կրունկի քարեր։ Մնացած՝ 0,86—0,90 մ չափեր ունեցող քարերից յուրաքանչյուրը որպես փականքի քար լրացրել է կրունկի քարերի միջև մնացած միջսյունային տարածության մյուս հատվածը։



Նկ. 9, 10, 11

Հետաքրքիրն այն է, որ եթե ֆրիզի հետևի ոչ քանդակազարդ ճակատում քարերը իրար հպված են սեպաձև, թեք մակերեսներով, ապա դրսից՝ այսինքն ֆրիզի քանդակազարդ ճակատում, նրանք իրար միանում են ուղղաձիգ հարթություններով (տե՛ս նկ. 11)։ Այս ուշագրավ կոնստրուկցիան ստացվել է հետևյալ ձևով։ Ֆրիզի քարի հաստության շուրջ 3/4-ի չափով քարի ներսի ճակատի կողմից պահպանվել են սեպաձև միացումների թեք կտրվածքները, իսկ դրսից, թեք հարթության վերևի եզրից իջեցրել են ուղղաձիգ հարթություն և ֆրիզի քարի հաստության մնացած 1/4-ի չափով ստացել եռանկյունաձև ելուն։ Նման միջոցառման հետևանքով, ֆրիզի քանդակազարդ ճակատում, փականքի քարը ուղղաձիգ հարթությամբ հպվում է կրունկի քարի համապատասխան ուղղաձիգ մակերեսին, իսկ ներսից թեք հարթությամբ իջնում կրունկի քարի թեք հարթության վրա։ Ֆրիզի փականքի քարի և արխիտրավի միջև ստեղծվում է դատարկ տարածություն, որի շնորհիվ տվյալ հատվածում արխիտրավը սեփական կշռից բացի, ուրիշ բեռ չի կրում։ Այսպիսով, կանխվում է արխիտրավի բեռնվածությունը և միաժամանակ պահպանվում ֆրիզի քանդակազարդ դաշտի նորմալ պատկերը։

Նույն եղանակով են կատարված նաև տաճարի մյուս ճակատների սյունաշարքերի ֆրիզի քարերի սեպաձև միացումները։

բ. Տաճարի արևմտյան ճակատի սյունաշարքի առաստաղի հարթ ծածկը կազմված է (0,90—1,05)×(1,74—2,12)×0,45 մ չափի տասներեք սալերից։ Դրանցից յուրաքանչյուրը իր մեկ ծայրով նստում է աղոթասրահի երկայնական պատի կամ նրա հյուսիսային և հարավային շարունակությունները կազմող հատուկ արխիտրավների վրա, իսկ մյուս ծայրով գրավում է սյունաշարքի համապատասխան արխիտրավի այն աղատ հատվածը, որը դուրս է մնացել ֆրիզի քարերի զբաղեցրած տարածությունից։

Արխիտրավի բեռը նվազեցնելու նպատակով, ֆրիզի նման, այստեղ նույնպես յուրաքանչյուր սյան առանցքի ուղղությամբ տեղադրվել է մեկական առավել մեծ չափի սալ, որն իր երկայնական եզրերի սեպաձև կտրվածքների շնորհիվ կատարել է կրունկի քարի դեր, իսկ մնացած սալաքարերից յուրաքանչյուրը, իբրև փականքի քար, համապատասխան թեք մակերեսներով ազուցվել է կրունկի երկու քարերի միջև։ Քարաշեն հարթ առաստաղի սալաքարերի սեպաձև միացումներով ստեղծված բեռնաթափող յուրահատուկ բարավորի (перемычка) միջոցով այս դեպքում նույնպես կանխվել է արխիտրավների գերբեռնվածությունը։

Նույն սկզբունքը կիրառվել է նաև տաճարի արևելյան ու հարավային սյունաշարքերի առաստաղների հարթ ծածկերի կառուցվածքներում։

գ. Ըստ էության նույն եղանակով, սակայն մի փոքր այլ հանգամանքով է լուծվել նախամուտքի առաստաղի հարթ ծածկի կառուցման հարցը։

Եթե սյունաշարքերի արևելյան, արևմտյան և հարավային առաստաղների ծածկերի սալաքարերը մի ծայրով նստում էին աղոթասրահի բավական մեծ (0,90 մ) հաստություն ունեցող խուլ պատերի վրա, ապա նախամուտքի առաստաղի սալերի համապատասխան ծայրերը դրվում են աղոթասրահի զգալիորեն փոքր (0,78 մ) հաստություն ունեցող հյուսիսային պատի վրա։ Իսկ եթե նկատի ունենանք հյուսիսային պատի մեջ ստեղծված մուտքի խոշոր (2,163×4,70 մ) բացվածքի առկայությունը և տաճարի մյուս ճակատների սյունաշարքերի առաստաղների ծածկի թռիչքների համեմատությամբ՝ նախա-

մուտքի առաստաղի ծածկի գրեթե երկու անգամ մեծ թռիչքը, ապա ակնառու կլինի նախամուտքի առաստաղի հարթ ծածկի կառուցման դժվարությունը։ Ինքնին հասկանալի է, որ նախքան նախամուտքի առաստաղի հարթ ծածկի կառուցումը, անհրաժեշտ էր կոնստրուկտիվ տեսակետից ապահովել մուտքի բացվածքի վրա շարվելիք պատի կրողունակությունը։

Վիտրուվիի վկայությամբ (մ. թ. ա. I դար), անտիկ տաճարների թե՛ մուտքի բացվածքը և թե՛ այն երիզող պարակալը դեպի վեր նեղանում էին[15]։ Այդպես է նաև Գառնիում։ Պարակալը մուտքի յուրաքանչյուր կողմում կազմված է դեպի վեր նեղացող քանդակազարդ երկուական քարերից, որոնց վերին վերջավորությունների 45 աստիճան անկյամբ կտրված թեք մակերեսների վրա նստում են պարակալի՝ մեկ ամբողջական քարից բազկացած հորիզոնական հատվածի համապատասխան անկյունները։ Պարակալի հորիզոնական հատվածն ըստ էության դառնում է մուտքի բացվածքը ծածկող, մեկ ամբողջական քարից պատրաստված բարավոր։

Որպեսզի պարակալի վրա ոչ մի բեռ չգա, նրա վրա շարվել է բարավորի դեր կատարող՝ սեպաձև միացումներով նորից երկու շարք։

Շարվածքի առաջին շարքը ստեղծվել է մուտքի պարակալի վրա դրված քանդակազարդ սանդրիկի քարերի միջոցով։ Սանդրիկը կազմված է 1,25, 1,65 և 1,25 մ երկարություն ունեցող երեք քարից, ուր կենտրոնինը դարձվել է սեպաձև միացման փականքի քար, իսկ կողքինները՝ կրունկի քարեր։ Սեպաձև միացումները իրականացված են այն նույն սկզբունքով, որը առկա է ֆրիզի քարերի սեպաձև միացումների կառուցվածքում. այսինքն, սանդրիկի քարերի քանդակազարդ ճակատները միմյանց հպված են ուղղաձիգ հարթություններով, իսկ հետևի ճակատները՝ սեպաձև կտրվածք ունեցող համապատասխան մակերեսներով։ Սանդրիկի փականքի քարի և պարակալի միջև ստեղծված է երեք սանտիմետր բարձրությամբ դատարկ տարածություն, որի շնորհիվ բեռնաթափվում է պարակալի քարը և վերևից եկող բեռը փոխանցվում մուտքի երկու կողքի պատերի վրա։ Հետաքրքրական է, որ Գառնիի տաճարին ժամանակով ավելի մոտ և օրդերային նույն սկզբունքով ստեղծված Բաալբեկի փոքր տաճարի (II դար) կառուցվածքում այդ հարցի լուծման համար ընտրվել է այլ եղանակ։ Այստեղ պարակալի հորիզոնական հատվածը և սանդրիկը միասին մի ամբողջական քար է, բաժանված երեք սեպաձև մասերի, որոնցից կենտրոնականը կատարում է փականքի, իսկ կողքի մասերը՝ կրունկի քարերի դեր։ Քանդակները փորագրվել են սեպաձև միացման հետևանքով առաջացած շեղանկյունի քարերի վրա[16]։ Նույն սկզբունքով է արված նաև Պալմիրայի Բաալի սրբավայրում, մ. թ. I դարի վերջերին ստեղծված տաճարի մուտքի պարակալի հորիզոնական հատվածի և սանդրիկի միացման հանգույցը[17]։

---

[15] Витрувий. Десять книг об архитектуре, кн. IV, гл. VI. М., 1936, էջ 87։

[16] D. Krenker, Th. von Lüpke, H. Winnefeld, Baalbek. Ergebnisse der Ausgrabungen und Untersuchungen in den Jahren 1898 bis 1905, 2. B., Berlin und Leipzig, 1923, Tafel 18; M. Wheeler, Roman Art Architecture, New York—Washington, 1965, էջ 95—96։

[17] «Всеобщая история архитектуры», т. II, кн. 2, М., 1948, էջ 251, աղ. 70։

Շուաղին վերը նշված լուծումը համարում է «мудрая предусмотрительность архитектора».

Ցարվածքի երկրորդ շարքը.— նախամուտքի առաստաղի սալերը տեղադրելուց առաջ սանդրիկի վրա պետք է շարվեր պատի դարձյալ երկու շարք-մեկը՝ նախամուտքի անտերի խոյակների բարձրության ուղղությամբ, իսկ մյուսը՝ այդ խոյակների վրայից ընթացող արխիտրավների բարձրության ուղղությամբ։ Նախամուտքի հարավային պատի և անտերի միացման հանգույցներում պահպանելով երկու շարքերը, ճարտարապետը մուտքի բացվածքի լայնության ուղղությամբ միացրել է դրանք և երկու շարքի ընդհանուր բարձրության չափով զետեղել յոթ ամբողջական քարերի սեպաձև միացումներով կազմված մեկ շարք, որը և հանդիսանում է մուտքի պարակալի վրա՝ սեպաձև միացումներով ստեղծված երկրորդ շարքը։ Այստեղ, սանդրիկի և նրա վրայի սեպաձև շարված պատի քարերի միջև ստեղծված դատարկ տարածության վերևի մակերեսը կորագիծ է. դռան բացվածքի ուղղությամբ կառուցվել է մեղմ կորություն ունեցող թաղ (որը շատ լավ երևում է տեղում)։ Սեպաձև միացումներ ունեն նաև նախամուտքի առաստաղի սալերը, որի շնորհիվ այս անգամ կանխվում է սանդրիկի վրայից ընթացող շարքի ու նրա դիմացի արխիտրավների զերբեռնվածությունը։

9. Տաճարի տանիքը ծածկված է եղել որձաքարից պատրաստված, զգալի (3—4 սանտիմետր, երբեմն ավելի) հաստություն ունեցող ձևավոր սալիկներով (солен), ըստ որում, երկու սալիկների միացման հանգույցները վերևից ադուցվել են դրսից երկլանջ, իսկ ներսից՝ ուղղանկյուն խոռոչ ունեցող կալիպտերներով (տե՛ս նկ. 12)։ Սալիկների տակի մակերեսները ոչ թե փայտաշեն տանիքների կղմինդրների նման ելուններ ունեն, այլ հարթ են. ակնհայտ է, որ դրանք շարվել են կրաշաղախի համատարած հարթ մակերեսի վրա։

Տաճարի ճակատների երկթեք լանջերի քիվի քարերի վրա կան սալիկները տանիքին միացնող մետաղական դամերի խոռոչներ։ Առանձին կալիպտերների վրա պահպանվել են մետաղե դամեր։

Այսպիսով, թե՛ աղոթասրահի հյուսիսային պատի համեմատությամբ արևելյան և արևմտյան պատերի մեծ հաստությունը, թե՛ աղոթասրահի երկայնական պատերի ամբողջ պարագծով պահպանված քարակերտ թաղի կրունկի քարերը, թե՛ կրունկի քարերի վրա պահպանված կրաշաղախի մնացորդները, թե՛ աղոթասրահի թաղակապ ծածկի հարավային ու հյուսիսային ճակատները եզրափակող պատերի կոր եզրագծերով որմնաքարերը, թե՛ նախամուտքի առաստաղի հարթ ծածկի վրա ստեղծված քարաշեն թաղի մնացորդները, թե՛ տաճարի արևելյան և արևմտյան ճակատների ամբողջ երկարությամբ քիվի քարերի, ինչպես և ճակատների անկյունների ու գագաթների քարերի վրա պահպանված կրաշաղախի մնացորդները, թե՛ տաճարի շրջապատում նույն կազմությունն ունեցող կրաշաղախի մեծ քանակությամբ խոշոր բեկորների առկայությունը, թե՛ կրաշաղախով տանիքի համար պատրաստված որձաքարի սալիկները (կղմինդրները) և թե՛ տաճարի կոնստրուկտիվ բոլոր հանգույցներում թաղակապ ծածկերին բնորոշ՝ սեպաձև միացումների առկայությունը, աներկբայորեն ցույց են տալիս, որ Դառնիի տաճարի կառուցվածքում փայտե ոչ մի մաս չի եղել։ Ամբողջ տաճարը քարակերտ է,

---

[18] Огюст Шуази, Строительное искусство древних римлян. М. 1938, էջ 105։

Իսկ աղոթասրահի և նախամուտքի հարթ առաստաղի վերևում ստեղծված ծածկերը ունեն քարաշեն թաղակապ հորինվածք:

Հետևապես, Գառնիի հեթանոսական տաճարը, լինելով I դարի երկրորդ կեսին (66-ից հետո, մինչև 77 թթ.) ստեղծված գործ, հանդիսանում է անտիկ ժամանակաշրջանի քարակերտ թաղակապ կառուցվածք ունեցող նույնատիպ հնագույն տաճարներից մեկը։



Նկ. 12

Հայտնի է, որ անտիկ ճարտարապետության մեջ թաղավոր-թաղակապ (сводчатый) *կոնստրուկցիաները մեծ զարգացում ստացան հին Հռոմի ճարտարապետության մեջ հատկապես I—IV դդ.։ Նշվել է, որ* «Соединение бетонной техники и арочно-сводчатых конструкций... оказало огромное влияние на развитие римского зодчества»[19].

Ճարտարապետության ճանաչված պատմաբան-տեսաբան Ն. Բրունովը Նեմաուզի (Նիմի) այսպես կոչված Դիանայի տաճարը ենթադրելով Օգոստոս կայսեր ժամանակների (մ. թ. ա. 30 թ.—մ. թ. 14 թ.) գործ, գրում է. «В его композиции содержится ядро *(խոսքը դահլիճի քարաշեն թաղակապ ներքին հորինվածքի մասին է — Ա. Ս.)*, из которого развивается вся последующая римская архитектура»[20].

Թաղավոր կոնստրուկցիաները խոշոր նշանակություն են ունեցել նաև հայկական ճարտարապետության զարգացման համար։ Հին Արևելքի նյութական մշակույթի մեծ գիտակ պրոֆ. Ստրժիգովսկին անդրադառնա-

---

[19] Н. С. Николаев, Строительные материалы, строительная техника и конструкции, «Всеобщая история архитектуры», т. II, М., 1973, ч. 2, «Архитектура древнего Рима», *էջ 422։*

[20] Н. И. Брунов, Очерки по истории архитектуры, т. II, *էջ 248։*

լով հայ ճարտարապետական արվեստում «կոնստրուկցիաների» խաղացած դերին, գրում է. «Կոնստրուկցիան—հայ եկեղեցական ճարտարապետության բաղածածկ տարածական կառուցվածքների հիմնական բնորոշ հատկանիշն է: Միջերկրական ծովի ավազանի երկրների փայտակերտ տանիքով եկեղեցիների համեմատությամբ եղած այդ տարբերությունը Հայաստանի քրիստոնեական հին ճարտարապետության պատմական զարգացման համար կճռաչյան գործոն հանդիսացավ»[21]:

Հայկական ճարտարապետության մեջ թաղավոր կոնստրուկցիաների խաղացած դերին իրավամբ տալով այսքան մեծ նշանակություն, Ստրժիգովսկին այդ կոնստրուկցիաները համարում է Հայաստան ներմուծված Միջագետքից և Ներքին Փոքր Ասիայից V դարում[22]: Սակայն Գառնիի տաճարը ցույց է տալիս, որ քարաներտ թաղը Հայաստանում գոյություն է ունեցել դեռևս անտիկ շրջանում, Ստրժիգովսկու նշած ժամանակահատվածից առնվազն չորս դար առաջ:

КАМЕННЫЙ СВОД АНТИЧНОЙ ЭПОХИ В ГАРНИ

А. А. САИНЯН

(Резюме)

Большой научный интерес представляет внутренняя структура Гарнийского языческого храма (I в. н. э.). Исследователи, касавшиеся этого вопроса, считали, что как целла, так и вся крыша храма имели деревянное покрытие (К. Романов, Н. Буниатян, К. Тревер и др.). Однако более обстоятельное изучение памятника показывает, что в его конструкции не было ни одной деревянной части. Здание имело четкую систему каменных конструкций, где целла (наос) и даже портик (пронаос) были перекрыты каменными сводами. Кроме цельных камней архитрава все части здания—фриз, карниз, сандрик двери, камни стены над сандриком, даже плиты плафона колоннады—имеют характерные для сводчатых конструкций клинообразные соединения.

Придавая большое значение той роли, которую играли сводчатые конструкции в формировании армянской архитектуры, выдающийся знаток материальной культуры Древнего Востока проф. Стржиговский считает эти конструкции заимствованными в V в. н. э. из Месопотамии или Внутренней Малой Азии. Однако наше изучение Гарнийского храма показывает, что каменный свод существовал в Армении по крайней мере за четыре века до указанного времени.

---

[21] J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918, B. I. էջ 308։

[22] Նույն տեղում, հատ. II, էջ 505։